րիբիգ անունով գիւղում, որ մօտ է ռուսաց սահմանին, Կգպօ անունով մի հայի տան մէջ բնակւում էր մի քուրդ ընտանիք. Տան տիրոջ 18 տարեկան որդին սիրահարւում է քրդի աղջկայ վրա և փախցնում է նրան, բերում մինչև Իգդիր և այնտեղ պսակւում է նրա հետ. Քրդերը հաւաքւում են և մահ են սպառնում տղայի հօրը, եթէ նա աղջկան չի վերադարձնի. Հայրը երկիւղից սարսափած, բերել է տալիս աղջկան և յանձնում է քրդերի ձեռքը. Չը նայելով, որ աղջիկը խոստովանել է, թէ իր կամքով է փախել հայ տղայի հետ և սիրում է նրան, այնուամենայնիւ, քրդերը տանում են նրան մի ուրիշ գիւղ, խեղդում են, և դիակը գիշերով յետ բերելով, ձգում են նոյն հայի տան երդիքից. տաւուտեան քրդերը հաւաքւում են և դիակը դուրս բերելով, ամբաստանում են հային սպանութեան մէջ. Գործը հասնում է թիւրքաց կառավարութեանը. թէ տղան և թէ հայրը կալանաւորւում են որպէս քրէական յանցաւորներ.

Մեզ հաղորդում են, որ ՀԱՒԼԱԲԱՐԻ ս. Էջմիածնայ եկեղեցում, տէր Գ. քահանան, մի հարսանիքի հանդիսակատարութեան ժամանակ, ժամերով եկեղեցում սպասել տալուց թէ հարս ու փեսային և թէ հանդիսականների բազմութեանը, բազազխանայի վաճառականի նման, սակարկութիւն անելով պսակի խորհուրդը կատարելու փողի մասին.

ՇՈՒԼԱՎԵՐԻՑ մեզ գրում են, որ այդ գիւղի մէջ նշանակված ոստիկանութեան պաշտօնեայ պ. Մամիկոնեան շատ բարեխիղճ կերպով է կատարում իր պարտականութիւնը.

Մեզ հաղորդում են ՇՈՒԼԱՎԵՐԻՑ հետևեալը. Քանի մի ժամանակ սրանից առաջ մի վեց տարեկան աղջիկ ընկել է մի տան թոնրի մէջ և այրվել է. Այս տեսակ դէպքեր յաճախ են պատահում մեր գիւղում. կանայք դուրս են գալիս տանից հարևանների հետ զրոյց անելու, իսկ երեխաներին մենակ են թողնում, երեխաները կամ կռւում են միմեանց մէջ, կամ խաղում են և ընկնում են թոնրի մէջ.

«Кавказъ» լրագիրը լսել է, որ Արդուինի հայ-կաթօլիկների եպիսկոպոսին, սրբազան Ջաքարեանին, որ այժմ Թիֆլիս է եկած, կը յանձնվի Կովկասի և Անդրկովկասի բոլոր հայ-կաթօլիկների թեմի կառավարութիւնը, բայց հռոմէական կաթօլիկներից, որոնք երևի կը մնան դարձեալ Սարատովի կաթօլիկ եպիսկոպոսի իշխանութեանը ենթարկված. Ռուս թերթը հաւատացնում է, որ Ջաքարեան եպիսկոպոսը վրաց ծագումից է և նրա իսկական ազգանունն է Կիկնաձէ. Լրագիրը երևի չը գիտէ, որ ամբողջ Անդրկովկասում վրացի կաթօլիկներ չը կան, բոլորն էլ, որոնք իրանց վրացի են ասում, նրանք հայ-կաթօլիկներ են, որոնք ուրացել են իրանց ազգութիւնը. Տիպը, ազգանունները բոլորն էլ ցոյց են տալիս, թէ նրանք հայեր են և Անդրկովկասի բոլոր կաթօլիկ եկեղեցիներում ժամասացութիւնը, պատարագը միշտ կատարվել է և կատարւում է հայերէն լեզուով. Միայն մի քանի տարի է, որ սկսում է մտնել մեր կաթօլիկ եկեղեցիներում վրացերէն լեզուն. Եթէ մեր կաթօլիկները վրացիներ էին և վրացի են, ինչի՞ բոլոր եկեղեցական արարողութիւնները, պատարագը կատարւում էին հայերէն լեզուով. Եթէ վրացիները ընդունել են կաթօլիկութիւնը, նրանք պէտք է ընդունած լինէին այդ կրօնը ռուսաց տիրապետութիւնից առաջ, որովհետև այժմ անհնարին է անցնել ուղղափառ եկեղեցուց դէպի մի ուրիշ որ և է եկեղեցի. Իսկ եթէ վրացիները վրաց թագաւորների ժամանակ են ընդունել կաթօլիկութիւնը, ինչի են մտցրել միմիայն հայոց լեզու իրանց եկեղեցիներում և երկար ժամանակ ոչ մի խօսք վրացերէն լեզուից չէր լսվում մեր երկրի կաթօլիկ եկեղեցիների բեմից. Պաշտօնապէս էլ կաթօլիկ եկեղեցին միշտ ճանաչված էր և անուանվում էր «հայ-կաթօլիկ եկեղեցի» և պաշտօնական թղթերում, այն օրից, երբ Ռուսաստանը տիրապետել է երկիրը, երբեք չէք պատահի վրացի-կաթօլիկ եկեղեցի բառը. Մի քանի տարի է միայն, որ այդ ազգուրաց և դաւաճան հայ-կաթօլիկները, մի յատկութիւն, որ յատուկ է հայերին, իրանց վրացի ձևացնելով, սկսեցին մտցնել իրանց եկեղեցիներում սաղմոսներ և աւետարան վրացերէն լեզուով. Բայց ամբողջ պատարագը դարձեալ չէ կատարւում վրացերէն լեզուով, այլ հայերէն. Հնարաւոր բան չէ, որ վրացին հայերէն լեզուն մտցնէր իր եկեղեցու մէջ.

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Լսում ենք, որ Մօսկվայի հայ հասարակութիւնը մտադիր է շուտով մի մեծ հանգանակութիւն բանալ իր մէջ Հայաստանի սովատանջների համար. Շատ ուրախ ենք լսելով, որ Մօսկվայի մի յայտնի հայ հարուստ չէ կամենում հետևել Ս. Պետերբուրգի մի կրէսոսի օրինակին, ուրիշներից ուղարկվող փողերը իր անունով նուիրելով Հայաստանի սովատանջներին, այլ մտադիր է ինքն նուիրել մի նշանաւոր գումար Թիւրքիայի հայ սովատանջների օգտին.»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Լսում ենք որ այս տեղի մի հայ կրեսոս մտադիր լինելով Էրզրումի և Վանի վիլայէթներում չնչին գնով առնել 82 գիւղ և այնտեղ փոխադրել ուզենալով իր հարստահարութեան մեքենայութիւնները, սկսել է ագենտներ որոնել Էրզրումի և Վանի մէջ իր շահաւէտ աֆերը գլուխ բերելու համար. Այդ դիտաւորութեամբ նա արդէն սկսել է բանակցել Խրիմեանի և Օրմանեանի հետ. Վաշխառուն ժողովրդի աչքին թոզ փչելու համար ընծայել է Էրզրումի եկեղեցիներից մինին մի էժանագին զանգակ.»

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, որ այդտեղի համալսարանի պրօֆէսոր յայտնի արևելագէտ պ. Ք. Պատկանեան, դիտաւորութիւն ունի գարնան ճանապարհորդել Ղարաբաղ, Նուխի և Վարդաշէն հնագիտական խուզարկութիւններ և փորուածներ անելու համար եկող տարվայ հնագիտական ժողովի համար, որ լինելու է Թիֆլիսում. Հայ գիտնականը պիտի այցելէ նոյնպէս Ղարաբաղի Տաթևի վանքը նրա արձանագրութիւնները և ճարտարապետութիւնը ուսումնասիրելու համար, նոյնպէս պիտի ուսումնասիրէ ուտիական լեզուն և բոլոր հնութիւնները, որոնք պահպանվել են թէ աւերակների և թէ աւանդութիւնների ձեռով Նուխու գաւառի Վարդաշէն, Նիժ, Ղարալա, Խաչմազ և Բում ուտիական գիւղերում. Չենք կասկածում, որ Նուխու և Ղարաբաղի հայ երիտասարդութիւնը արժանաւոր կերպով կընդունեն իրանց պատւաւոր հիւրին, հեշտացնելով նրան իր ազգօգուտ խուզարկութիւններն անելու միջոցը.

Լօռու գաւառի ԳԵԱՌԳԵԱՌ գիւղի բնակիչ Զաքարիա Գեմիրխանեանից ստացանք 3 ր. յօգուտ Վանի սովեալների:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները: Իռլանդական գործերը հետզհետէ վտանգաւոր ընթացք են ստանում: Երբեմն երբեմն ամբոխը բացարձակ կռիւներ է ունենում պօլիցիայի հետ: Բալլինի մէջ, երբ պօլիցիականները փորձեցին կալանաւորել իռլանդական կալուածական միութեան անդամներից մէկին, որ ճառախօսում էր ահագին ամբոխի առաջ, նրա լսողները յարձակվեցին պօլիցիականների վրա և նրանցից մի քանիսին վիրաւորեցին: Պօլիցիան ստիպվեցաւ զէնք գործածել և այս դէպքում միայն կարելի եղաւ կալանաւորել ճառախօսին, որի անունը մինչև այժմ անյայտ է:

Այս անցքը մեծ նշանակութիւն ունի: Անգլիական ընդհանուր օրէնքների համեմատ, թէ Իռլանդիայի և թէ միւս տեղերի մէջ կարելի է կալանաւորել միայն այնպիսի ճառախօսների, որոնք բացարձակ դրդում են լսողներին ապստամբվել, կամ զինաւորված ընդդիմադրութիւն ցոյց տալ իշխանութեանը: Այս հիման վրա կարելի է ենթադրել, որ Բալլինի մէջ արտասանված ճառը այդպիսի վրդովեցուցիչ բնաւորութիւն ունէր, որովհետև անկարելի է մտածել, որ այժմեան կառավարութեան ժամանակ պօլիցիան համարձակվի խախտել օրէնքը, մարդկերանց 'ի զուր կալանաւորելով: Եթէ այս ենթադրութիւնը ճիշդ է, ուրեմն կալուածական շարժումը Իռլանդիայի մէջ նոր ձև է ստացել: Մինչև այժմ այդ կուսակցութեան առաջնորդները գործում էին այն ձևով, որ օրէնքը պահպանում էր նրանց անձնական ապահովութիւնը: Ճառեր արտասանելու ժամանակ նրանք այնքան հեռու չէին գնում, որ օրէնքը նրանց հալածէր: Այդ զգուշութիւնը մինչև այժմ կազմում էր իռլանդական վարչութեան դժուար դրութիւնը: Կալուածական ցոյցերը մինչև այժմ անգլիական սահմանադրութեան թոյլ տուած սահմաններից չէին դուրս գալիս և այդ ցոյցերին մասնակցողները անպատիժ էին մնում: Այս էր պատճառը, որ մի քանիսները առաջարկեցին Իռլանդիայի համար առանձին բացառական օրէնքներ հրատարակել:

Եթէ Բալլինի անցքի ժամանակ պօլիցիան չէ չափազանցացրել իր իշխանութիւնը, ուրեմն բրիտանական կառավարութեան գործը փոքր 'ի շատէ հեշտացած պէտք է լինի: Բացարձակ ապստամբութեան դէմ կառավարութիւնը զինաւորված է սովորական օրէնքներով: Իռլանդիայի մէջ կառավարչական զօրքերը կարող են գրաւել այն տեղերը, որտեղ փողոցային անկարգութիւններ են սպասվում և բացի զօրքերից կառավարութիւնը պօլիցիա ունի, որ Իռլանդիայի մէջ միշտ զինաւորված է լինում: Այսպիսի ույժերով միշտ կարելի է յաղթել փողոցային ամբոխին, երբ նա կը ձգտի ազատել կալանաւորվածին:

Այսպէս թէ այնպէս անգլիացիների համար համակրելի չեն կարող լինել փողոցային կռիւները և նրանք աւելի լաւ են համարում գործադրել արդէն շատ անգամ յաջողութեամբ փորձված միջոցը՝ դադարեցնել սահմանադրական ապահովութիւնը Իռլանդիայի մէջ: Այս գործի հակառակորդները կարող են ասել, որ այդ միջոցը թէպէտ հասնում է իր նպատակին, բայց երբէք չէ դադարեցրել չարիքը, միայն ժամանակաւորապէս կանոնաւորել է գործերի ընթացքը: Այդ միջոցը գործադրելուց յետոյ իւրաքանչիւր անգամ, երբ սահմանադրութիւնը երկրի մէջ նորից ույժ էր ստանում, իռլանդացիք աւելի անբաւական և վրդովված էին լինում: Մի և նոյն բանը կարող է այժմ պատահել: Բացառական օրէնքները կարող են աւելի էլ գայրացնել իռլանդացիներին: Հարկաւոր են բոլորովին այլ միջոցներ: Պէտք է երկրի մէջ մտցնել կալուածական վերանորոգութիւններ և բարելաւել իռլանդացի երկրագործների վիճակը: Երբ Գլադստոնի մինիստրութիւնը այսպէս կը վարվի, նա կարող է ասել. «Հարկաւոր է առաջ կարգը պահպանել, իսկ յետոյ ազատութիւնը ձեռք բերել:»

Անգլիական լրագիրները հաղորդում են, որ արտաքին գործերի նախկին մինիստր մարկիզ Սալիսբիւրի Նորիչումս քաղաքական մի ճառ արտասանեց: Խօսելով անգլիական ժողովների մասին, նախկին մինիստրը հերքում էր այն կարծիքը, իբր թէ պարլամենտը միայն 'ի նկատի պէտք է առնի համայնքների ժողովի վճիռները: Արտաքին քաղաքականութեան մասին խօսելով, նա ծաղրեց ծովային ցոյցը, որ չը հասաւ իր նպատակին: Նա ասաց, որ լորդ Բիկօնսֆիլդի կառավարութիւնը չէ կարող պատասխանատու լինել Դուլցինիօն չերնոգօրցիներին յանձնելու առաջարկութեան վերաբերութեամբ: «Ի հարկէ, ասաց նա, սուլթանը այդ հարցի վերաբերութեամբ բաւական շատ պարտաւորութիւններ ունի, բայց ոչ մի պետութիւն պարտաւոր չէ զինաւորված ույժով իրագործել որ և է դաշնագրութիւն: Այս կարծիքի ճանաչելը շատ վտանգաւոր է և եթէ կառավարութիւնները այդպիսի ընթացք բռնեն, Եւրոպայի մէջ ընդհանուր անվերջանալի պատերազմ կը ծագի:» Սալիսբիւրի հաւանում է այժմեան մինիստրութեան վճիռը Չերնոգօրիական հարցը խաղաղ ճանապարհով վերջացնելու մասին: Նա բաւական է այժմեան մինիստրութեան արտաքին քաղաքականութենից այն ժամանակից, երբ Գլադստոն Լօնդօնի լորդ-մերի մօտ արտասանեց իր ճառը. Այդ ճառից երևում է, որ Գլադստոն մտադիր է հետևել Բիկօնսֆիլդի արտաքին քաղաքականութեանը: Սալիսբիւրիի ճառի մնացած մասը նուիրված է իռլանդական գործերին:

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պօլսից „Polit. Corresp.“ լրագրին նոյեմբերի 16-ից գրում են հետևեալը:

Դիպլօմատները անհամբերութեամբ սպասում են այն բացառական խաղաղ միջոցների հետևանքներին, որոնցով Դերվիշ-փաշա պէտք է ալբանցիների ընդդիմադրութեան առաջն առնէ: Հաւատացնում են, որ Դերվիշ-փաշայի կողմից Բ. Դրանը հաղորդած տեղեկութիւնները հանգստացուցիչ բնաւորութիւն ունեն և նրանց համեմատ կարելի է գործի խաղաղ վախճանի վրա յոյս դնել, բայց այդ լուրերին այստեղ ոչ ոք չէ հաւատում: Աւելի հաստատ տեղեկութիւններ ստանալու համար սուլթանը Կ. Պօլիս հրաւիրեց Ռիզա-փաշային, որ Ալբանիա էր ուղարկված առանձին յանձնարարութեամբ: Կ. Պօլսի մէջ գտնվում են հինգ հարուստ ալբանցիներ, որոնք մշտական ալբանական մասնաժողով են կազմում: Ալբանցիները այդ մասնաժողովը ընդունում են իրանց կառավարութեան տեղ և դա զօրեղ է, որովհետև կարողացաւ արտաքսել տալ Պրիզրենդից թիւրք վարչութիւնը: Այդ մասնաժողովը վճռել է արագաշարժ զօրաբաժիններ կազմել, որոնք պէտք է արտաքսեն յունական ապստամբ խումբերը, որոնք լցրել են Էպիրոսը և Թեսսալիան: Ասում են, որ թիւրքաց կառավարութիւնը ալբանցիներին շահելու համար մտադիր է նրանց երեք նահանգներից մի վիլայէթ կազմել: Կ. Պօլսի մէջ լուր է տարածված, որ Թիւրքիան Էպիրոսի և Թեսսալիայի մէջ 115,000 զօրք ունի: Այս թուանշանը անկասկած չափազանցեցրած է, բայց թիւրքաց զինուորական մինիստրը հաւատացած է, որ թիւրքաց զօրքերը գերազանցում են յունական զօրքերին, որոնք ծանօթ չեն պատերազմական գործի և կարգապահութեան հետ: Այս համոզմունքը այնքան արմատացած է, որ մինիստրների խորհուրդի մէջ առաջարկութիւն եղաւ չը սպասել, որ յունական կառավարութիւնը սկսի պատերազմական գործողութիւններ, այլ ուղղակի յարձակվել Յունաստանի վրա: Այդ առաջարկութիւնը անող մինիստրը ասում էր, որ կարելի է հաւատացնել Եւրոպային, թէ յոյները յարձակվեցան թիւրքերի վրա: Որքան էլ յոյները պնդեն հակառակը, Եւրոպան նրանց չի հաւատայ: Այսպիսի վճիռը թէպէտ դեռ չէ կայացրած, բայց թիւրք զօրապետները շատ են ցանկանում յարձակվել յոյների վրա և ջարդել նրանց:

Թիւրք կառավարութիւնը խիստ միջոցներ է գործադրում յունական մամուլի դէմ և նորերումս մի կարգադրութեամբ արգելեց յունական լրագիրների Թիւրքիա բերելը: Այդ հրամանի համեմատ պատժվում են յունական լրագիրների ոչ թէ միայն ծախողները, այլ և գնողները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի. «Herald» լրագիրը հաղորդում է, որ գաղտնի տպարանը գտնվում է Խարկովի և ոչ թէ Կիևի մէջ: Նոյն գործի մասին «Голосъ» լրագրին Խարկովից հաղորդում են. Նոյեմբերի 5-ին գիշերը Կանտօրսկայա փողոցի վրա, Սօրօկինկօի տան գտնվեցաւ գաղտնի տպարան: Բացի մամուլից գտնվեցան „Народная Воля“ հրատարակութեան ամբողջ շարուածքը սեպտեմբերի 17-ից, բաւական շատ կեղծ կնիքներ, անցագրերը, մի քանի համար „Земля и Воля“ հրատարակութենից և արգելված բրօշիւրներ: Կալանաւորված են երկու անձինք, որոնք ընդդիմադրութիւն չը ցոյց տուին:

ՓԱՐԻԶ, 20 նոյեմբերի: Ֆրանսիական պալատի ժողովները կը փակվեն նոյեմբերի 20-ին, նորից կը բացվեն 1881 թուի յունվարի 11-ին:

ՍՕՖԻԱ, 20 նոյեմբերի: Մահմեդական բուլղարացիները հրաժարվում են մասնակցել զինուորագրութեանը:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ